Եզրակացություն

ՀՀ կադաստրի կոմիտեի և «Ալպեսա» ՍՊԸ-ի միջև 2020 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված «Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման» պետական գնման ՈԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/07 պայմանագրի վերաբերյալ

ՀՀ կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ալպեսա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 2020 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված «Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման» պետական գնման ՈԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/07 պայմանագրով սահմանված կարգով (այսուհետ՝ Պայմանագիր)՝ Պայմանագրի կողմ հանդիսացող Կապալառուն ստանձնել էր պարտավորություն կատարել ընթացիկ նորոգման աշխատանքներ Նոր Նորքի 5-րդ զանգվածի Միկոյան 7 հասցեում գտնվող մասնաշենքում մինչև 2020 թվականի դեկտեմբերի 10-ը ընկած ժամանակահատվածը, սակայն մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ն այդ աշխատանքները դեռ ավարտին հասցված չեն:

Հարկ է նշել, որ Կապալառուի կողմից կատարվել են մասնակի աշխատանքներ, որոնց համար Պատվիրատուն Պայմանագրով սահմանված կարգով կատարել է վճարում 2 փուլով՝ համաձայն ներկայացված կատարողական ակտերի:

Միաժամանակ հայտնում ենք, որ Կոմիտեի 2020 թվականի դեկտեմբերի 17-ի ՈԱԹ7285-2020 գրությամբ (կցվում է) Կապալառուն տեղեկացվել է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել և պահանջել հատուցել պատճառված վնասները համաձայն Պայմանագրի 3-րդ կետի 3.1.4 ենթակետի «ա» մասով, եթե Կապալառուն աշխատանքը կատարում է դանդաղ, որի պատճառով դրա ժամանակին ավարտը դառնում է անհնար և «բ» մասով, եթե Կապալառուն խախտել է Պայմանագրով նախատեսված ժամկետը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը լուծել Կապալառուի հետ կնքված Պայմանագիրը, պայմանավորված շինարարության ժամկետի, ինչպես նաև բյուջետային տարվա ավարտով:

Առդիր՝ 2 թերթ:

Պատասխանատու ստորաբաժանում՝

Ֆինանսատնտեսական վարչության
խորհրդական Կարինե Ղազարյան

Տնտեսական մասի ղեկավար՝ Մանուշ Ամիրաղյան

30.12.2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Երևան, 0023, Արշակունյաց պողոտա 7
Հեռ.՝ +374-60-474144

17.12.2020 № ԱԲ 7285-2020

Ձեր _____ առ _____

«ԱԼՊԵՍԱ» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Պետրոս Քարամյանին
(ՀՀ ք. Երևան, Ավան, Նարեկացի 41, բն. 7)

Հարգելի՛ պարոն Քարամյան,

Տեղեկացնում ենք, որ «ԱԼՊԵՍԱ» ՍՊԸ-ի և Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) միջև 16.10.2020թ. կնքված՝ «Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման» պետական գնման թիվ ԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/07 պայմանագրով ստանձնած պարտավորությունները, այն է՝ սույն թվականի հոկտեմբերի 10-ին լրացել է պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետը:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետով սահմանված կարգը՝ Կոմիտեն կարող է միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք թիվ ԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/07 պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 20-ը:

Recoverable Signature

X

ԱՐԹՈՒՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: TOVMASYAN ARTUR 3012780068 Արթուր Թովմասյան

Կատարող՝ Կ.Ղազարյան
Ֆինանսատնտեսագիտական

Կադաստրի
կոմիտե

վարչության խորհրդական
Հեռ՝. 060-474141

Կադաստրի
կոմիտե